ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	Առաջարկի անվանումը	Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	Առաջարկի կարգավիճակը • *Ընդունվել է* • *Մերժվել է*	Մերժման դեպքում՝ հիմնավորումը
1.	Իջևանի մարզադպրոցի դիմացի արհեստական խոտածածկով խաղադաշտի վերանորոգում	Իջևանի մարզադպրոցի դիմացի արհեստական խոտածածկով խաղադաշտի վերանորոգում 5-6 միլիոն դրամ, Հարթեցում, ցանկապատի մասնակի վերանորոգում, խոտածածկի տեղադրում, տարածքի համապատասխանեցում:	*Մերժվել է*	*Այդ տարածքը նախատեսված է միջազգային կազմակերպությունների կողմից նախատեսվող ծրագրով վերանորոգել գերժամանակակից լուծումներով*
2.	Երիտասարդական այգի	Երիտասարդական այգին կծառայի որպես հանրային, բաց և երիտասարդական ակտիվության խթանող տարածք, որտեղ նրանք կարող են համախմբվել, ազատ շփվել, կազմակերպել միջոցառումներ, քննարկումներ, ընթերցել, 3,5 մլն դրամ	*Մերժվել է*	*Տարածքը պատմամշակութային է*
3.	Մյասնիկյան փողոցի վերանորոգում	Առաջարկում ենք Իջևան քաղաքի Մյասնիկյան	*Ընդունվել է*	

		փողոցը վերանորոգել տուֆով, քանի որ 30 տարուց ավելի չի վերանորոգվել, 6-7 մլն ՀՀ դրամ		
4.	Ռ.Խոջումյան փողոցի ասֆալտապատում	Ճանապարհի երկարությունը 290,0 մետր է, ասֆալտապատման համար անհրաժեշտ է մոտավոր հաշվարկով 8 552 000 ՀՀ դրամ	*Ընդունվել է*	
5.	Ճոճվող կամրջի վերականգնում	Աղստև գետի վրա ճոճվող կամրջի կառուցում, անվտանգության գոտու հիմնում և տարածքի բարեկարգում, *10 միլիոն դրամ*	*Ընդունվել է*	
6.	Ներառական խաղահրապարակ և ֆուտբոլի դաշտի բարեկարգում	Ծրագրի շրջանակում նախատեսվում է Իջևանի մարզադպրոցի առջևի հրապարակում (Աբովյան 1) կառուցել ժամանակակից և անվտանգ ներառական խաղահրապարակ և բարեկարգել հարակից ֆուտբոլի դաշտը, 10 մլն դրամ	*Մերժվել է*	*Այդ տարածքը նախատեսված է միջազգային կազմակերպությունների կողմից նախատեսվող ծրագրով վերանորոգել գերժամանակակից լուծումներով*

7.	Թենիսի կորտի կառուցում Իջևան քաղաքում	Իջևանում բացօթյա թենիսի կորտի կառուցումը կդառնա համայնքի բնակիչների համար առողջ ապրելակերպի խթանման, երիտասարդների ժամանցի ու սպորտային զարգացման կարևոր հարթակ, *10 միլիոն դրամ*	*Մերժվել է*	*Այդ տարածքը համայնքային չէ և պատկանում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը*
8.	«Ստեղծարար Օազիս» ներառական հանրային գոտի	Ծրագիրը նախատեսվում է Ազատամարտիկների հրապարակում՝ «Ամալյա Կարապետյանի անվան նախակրթարան» ՀՈԱԿ-ի հարող տարածքում (դեպի արևմուտք և դեպի հյուսիս, մոտավորապես 6000քմ) ստեղծել ժամանակակից, կանաչապատ և բազմաֆունկցիոնալ գոտի, 8,73 մլն դրամ	*Մերժվել է*	*Տարածքը տրված է վարձակալությամբ*
9.	Մանկության գունավոր ճանապարհը	Առաջարկը նպատակ ունի բարեկարգել Իջևան քաղաքի թիվ 1 (Անկախության փողոցը Մայիսյան փողոցին միասնող աստիճաններ) և թիվ 8 (Երևանյան փողոցը Ղարագյոզյան փողոցին	*Ընդունվել է*	

		միացնող աստիճաններ) մանկապարտեզներ տանող անբարեկարգ աստիճաններով ճանապարհը: Այն ներկայումս մաշված է, որոշ հատվածներում աստիճանները վնասված են կամ բացակայում են, տարածքում աղբ է կուտակված: Նախագծի միջոցով կկատարվի աստիճանասանդուղքների վերանորոգում և կառուցում, կկատարվի տարածքի մաքրման աշխատանքներ, կտեղադրվեն աղբամաններ, իսկ աստիճանները կզարդարվեն գունեղ ու հետաքրքիր լուծումներով, Ցմլն.320 հազար ՀՀ դրամ		
10.	«Աճարկուտի մշակութային պատկերը»	Նախատեսվում է պատի վրա պատկերել Աճարկուտ գյուղի պատմամշակույթային ժառանգության պատկերները՝ Սրանոցի կամուրջը, Կիրանցի վանքը, Դեղձնուտի վանքը և Սամսոնի վանքը:	*Ընդունվել է*	